

ՀԻՆ ՌՈՒՄԲԻ ՊԱՅԹՈՒՄ ԵՒ ՉՈՐԵՐ ԱՐՍԱԼԻ ՄԵՋ

12 տարեկան աղջիկ մը եւ իր 10 տարեկան եղբայրը զոհուեցան Արաւի Ուստի Յմայետ շրջանին մէջ, երբ ծիւնով խաղալու ընթացքին պայթեցաւ ահաբեկչական կազմակերպութիւններու գիւնտալներէ մնացած կասկածելի առարկայ մը: Ապահովական ուժերը բացին հետաքննութիւն՝ իմասալու համար մանրամասնութիւնները:

ՈՉ ԵՒՄ Է ՏՈՒՆԱՐԻՆ 25-ԱՄԵԱՅ ՓՈԽԱՐԺԷՔԸ

Ոչ պաշտօնական շարք մը փոխարժեքներ ունենալու անկայուն վիճակի սկիզբէն երեք տարի ետք, Լիբանան Փետրուար 1-էն սկսեալ ունի ամերիկեան տոլարի պաշտօնական նոր փոխարժեք: Նախկին 1507,5 լիբան տասնապատիկ բարձրացած է 15 հազար լիբանի, հիմնուելով կեդրոնական դրամատան կառավարիչ Ռիատ Սալամէի նախանցեալ ուշ գիշերին կատարած յայտարարութեան ու երեկ տարածուած տեղեկութիւններուն վրայ: Այսուհանդերձ զուգահեռ շուկային մէջ սակագինը շատ չէ ազդուած պաշտօնական նոր սակագինէն եւ երեկ կը շարունակէր տատանուիլ 61,000 եւ 62,000 լիբանանէն լիբանի միջեւ:

Տոլարի պաշտօնական փոխարժեքի փոփոխութեան լոյսին տակ, նաեւ 15 հազար լիբանի բարձրացաւ TVA-ի տուրքը: Չգալիօրէն բարձրացան վաճառանկալի սակագինները: 95 օքթան պենզինի թիթեղին սակագինը հասաւ 1,160,000 լիբանի, մագուլթի թիթեղին գինը՝ 1,197,000 լիբանի, իսկ կազը՝ 734,000 լիբանի:

ԱՊՐՈՒՍԱՅԻՆ ԶԱՐՑԵՐ

Տնտեսութեան նախարարի պաշտօնակատար Ամին Սալամ տեսակցեցաւ վարչապետի պաշտօնակատար Նաժիպ Միքաթիի հետ ու քննարկեց անհրաժեշտ նիւթերու սակագիններու թղթածրարը: Սալամ յայտարարեց, թէ ցորենի ճգնաժամին լուծումը մօտեցած է, որովհետեւ թղթածրարը պիտի արժարձուի կառավարութեան արտակարգ յաջողոյ նիստին ընթացքին, մինչ բաւարար դրամ ապահովուած է՝ ցորենի բեռը ներածելու համար:



Ամին Սալամը (ձախ) և Նաժիպ Միքաթիի (աջ) հարցազրույցի ժամանակ:



Առողջապահութեան նախարարի պաշտօնակատար Ֆիրաս Ապիատ յայտնեց, թէ երեխաներու կաթի մեծ բեռը շուտով կը հասնի Լիբանան, իսկ քաղցկեղի յատուկ դեղորայքի հարցը որոշակիօրէն բարելաւած է, սակայն տակալին չէ լուծուած:

Ուժանիւթի եւ ջուրի հարցերու նախարարի պաշտօնակատար Ուալիտ Ֆայյատ տեսակցեցաւ վարչապետ

Նաժիպ Միքաթիի հետ, ընկերակցութեամբ Ֆրանսայի ելեկտրականութեան հաստատութեան պատուիրակութեան մը: Ֆայյատ մարդեց, որ բանակն ու ապահովական կառույցները յանձնառու մնան իրենց խոստումին եւ ելեկտրականութեան հաստատութեան աշխատակիցներուն օժանդակելն վերացնել ցանցին նկատմամբ գործադրուած ոտնձգութիւնները: Ըստ Ֆայյատի, հաստատութիւնը առայժմ պիտի արտադրէ միայն 250 մեկաուաթ ելեկտրականութիւն, սակայն եթէ ոտնձգութիւնները վերանան, ապա կարելի պիտի ըլլայ ելեկտրականութիւնը հասցնել մինչեւ 300 մեկաուաթի:



Ֆրանսայի ելեկտրականութեան պատուիրակութեան անդամները (ձախ) և Նաժիպ Միքաթիի (աջ) հարցազրույցի ժամանակ:

ՆԱՏԱՅՈՅՑԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Յառաջիկայ Չորեքշաբթի, Փետրուար 8-ին սկզբունքով տեղի պիտի ունենայ աշխատարկական ընդհանուր համադաշնակցութեան ընդհանուր գործադուլը, մասնակցութեամբ աշխատարկական գանազան համախմբումներու: Այս ծիրին մէջ, օդային փոխադրութեան համադաշնակցութիւնը յայտարարեց, թէ յանձնառու կը մնայ գործադուլի որոշումին, միաժամանակ նկատի առնելով թռիչքները չիւղընդոտելու յանձնարարութիւնը: Հաղորդագրութեամբ մը համադաշնակցութիւնը շեշտեց, թէ գործադուլը միջոց մըն է բողոքելու աշխատարկաներու ցած աշխատարածքուն, ապրուստային ծանր կացութեան, կրթութեան եւ առողջապահութեան բացակայութեան դէմ: «Առնչակից մարմիններէն կը պահանջենք անյապաղ աշխատիլ լուծումներ գտնելու՝ խուսափելու համար անելի ծանր կացութենէ», նշուած է հաղորդագրութեան մէջ:



Միջազգային փոխադրութեան համադաշնակցութիւնը (UTA) յայտարարեց, թէ յանձնառու կը մնայ գործադուլի որոշումին:

ՎԱՐԴԱՆԵԱՆ. «ԽՆԴԻՐԸ ԶԻ ԼՈՒԾՈՒԾՈՒԻ ԺՈՂՈՎՈՒՐԸ ԲՆԱԶՆԶԵԼՈՎ»

Արցախի Հանրապետութեան պետական նախարար Ռուբէն Վարդանեան յայտարարեց, թէ Արցախի հիմնախնդիրը կարելի չէ լուծել իրենց հայրենիքին մէջ ապրող 120 հազար մարդ բնաջնջելով: Գանատական The Hill Times-ին հետ իր գրոյցին մէջ Վարդանեան կոչ ուղղեց ճնշում բանեցնել Ատրայեճանի վրայ՝ միջանցք վերաբանալու համար: Ան նաեւ առաջարկեց մարդասիրական օդային միջանցք բանալ դէպի Արցախ մատակարարումներ կատարելու համար:



190 ԾՆՈՒՂ

Շրջափակուած Արցախի մէջ մինչեւ երեկ 550 քաղաքային զրկուծ էր վիրահատումի միջոցաւ առողջական խնդիրներու լուծումի հնարաւորութենէ: Հիւանդանոցներու վերակենդանացումի բաժանմունքներուն մէջ կը գտնուի 12 չափահաս հիւանդ, որոնցմէ հինգին վիճակը ծայրայեղ ծանր է: 7 երեխայ կը գտնուի մանկական հիւանդանոցի նորածնային եւ վերակենդանացումի բաժանմունքներուն մէջ: Շրջափակումի տակ Արցախի մէջ ցարդ ծնած է 190 երեխայ:



Արցախի մէջ ցարդ ծնած երեխաները և ծնողները:

Կարմիր խաչի միջազգային կոմիտէի միջնորդութեամբ եւ ընկերակցութեամբ Արցախէն Հայաստան փոխադրուած է ընդամենը 58 հիւանդ:

Պաշարումի տակ շուրջ 5103 մարդ կորսնցուցած է աշխատանքը եւ այժմ չունի եկամտի աղբիւր:

ԵՐՈՂԱԿԱՆ ԴՍԱՊԱՐՏՈՒՄ



Պեճիքայի խորհրդարանի արտաքին յարաբերութիւններու յանձնաժողովը բանաձեւ մը վաւերացուց՝ ատրպեյճանի յորդորելով անմիջապէս բանալ Լաչինի միջանցքը: Միաձայն վաւերացուած բանաձեւը կը դատաւարտէ Արցախի շրջափակումը եւ Պաքուի իշխանութիւններէն կը պահանջէ վերջ տալ այդ արարքին: Իսկ Երոյսական խորհրդարանին մէջ վաւերացուած «Մշակոյթի համար նոր երոյսական օրակարգի եւ միջազգային մշակութային յարաբերութիւններու համար Երոյսական նոր ռազմավարութեան իրականացում» բանաձեւը, որուն մէջ դատաւարտուեցաւ Արցախի մշակութային արժեքներու ոչնչացումին ուղղուած Ատրպեյճանի քաղաքականութիւնը:

ՀՐԴԵՐԻ ՄՊԱՅԻ ՀԵՏԱՊՆՈՒՄ



Յունուար 19-ին Հայաստանի Ազատ գիւղի զօրամասին մէջ բռնկած հրդեհի եւ 15 զինուորներու մահուած պատճառ հանդիսանալու գծով կալանաւորուած սպան կը մերժէ ցուցմունք տալ քննչական կոմիտէի քննիչներուն: Կալանաւորուած տասնապետը կը հետապնդուի զենքի, ռազմամթերքի, ռազմական սարքերու կամ ռազմական այլ գոյքի, շրջապատի համար վտանգ ներկայացնող նիւթերու հետ վարուելու կանոնները խախտելու մէջ, որուն հետեւանքով անգուշչութեամբ երկու կամ անելի անձ մահացած է:

Յիշեցնենք, որ ենթադրաբար հրդեհին պատճառ դարձած սպան եւս ունի այրուածքներ եւ վիճակը միջին ծանր է: Ըստ քննչական կոմիտէի հետաքննութեան եզրակացութեան, Յունուար 19-ի արեւածագին, սպան խախտած է շրջապատը հրդեհէ պաշտպանող կարգերը եւ դիւրավառ նիւթ՝ պենզին թափած է վառարանին մէջ, մինչ օրէնքը խստի կ'արգիլէ նման հեղուկներու գործածութիւնը վարառանին մէջ: Այս գործով մեղադրեալի կարգավիճակ ունին նաեւ նոյն զօրամասի շարք մը պատասխանատու պաշտօններ վարող սպաներ, որոնք եւս կալանքի տակ են:

ԱՄԲԱՏԱՏՆՈՒԹԻՒՆՆԵՐ ՔՐՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

Իրանի ՄԵՀՐ լրատու գործակալութիւնը հաղորդեց, թէ Ասֆահան քաղաքին մէջ պաշտպանութեան նախարարութեան ենթակայ համալիր մը թիրախաւորած անօդային թռչող սարքերը եւ պայթուցիկ նիւթերը Իրան մուտք գործած են Իրաքի Զիւրտիստան գաւառին մէջ տեղակայուած եւ Իրանի իսլամական յեղափոխութեան ընդդիմացող քրտական կազմակերպութիւններու ցուցմունքով եւ մասնակցութեամբ: «Արտաքին կառուցի մը հրահանգով սարքի համապատասխան կտորներուն տիրանալէ ետք, քրտական կազմակերպութիւններ կազմեցին սարքն ու պայթուցիկները, ապա զանոնք յանձնեցին մարզուած ուժերու՝ գործողութիւններ իրականացնելու համար», յայտարարեց Թեհրան:

ՔԱԹՈՐԻ ԴԵՄՊԱՆԸ ԱՅՑԵԼԵՑ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Չորեքշաբթի, 1 Փետրուար 2023-ի յետմիջօրէին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Յայրապետը ընդունեց Զաթարի նորանշանակ դեսպան Իպրահիմ Պըն Ապտ Ալ-Ազիզ Սահ-



լաուի այցելութիւնը: Զանդիպան ներկայ էին Միացեալ Արաբական Եմիրութեանց, Զաթարի եւ Օմանի թեմի առաջնորդ Գերշ. Տ. Մետրոպ Եպս. Սարգիսեան եւ Ազգային Կեդրոնական Վարչութեան համա-ատենապետ Գրիգոր Մահերեմեան:



Զանդիպումը տեւեց շուրջ երկու ժամ: Լայն քննարկումի ենթարկուեցան հայ եկեղեցւոյ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան առաքելութեան ու թեմական կառոյցներուն, Լիբանանի այժմու կացութեան, նախագահական ընտրութեան եւ Զաթարի հայ համայնքին առնչուած հարցեր:

Վեհափառ Յայրապետը իր բարձր գնահատանքը յայտնեց միջ-կրօնական բնագաւառէն ներս, ինչպէս նաեւ Միջին Արեւելքի մէջ Զաթարի դրական դերակատարութեան եւ անոր ցուցաբերած լայնախոհ մօտեցումներուն նկատմամբ: Զանդիպման աւարտին, Նորին Ս. Օծուքինը նամակ մը յանձնեց դեսպանին՝ ուղղուած Զաթարի Եմիր Դամիմ Պըն Զամատ Ալ-Սանիին:

ԵՆ ԲԸՆԱԶԵՐԻՆ ՄԷՋ ԴԱՏԱԳԱՐՏՈՒՄԸ Է ԼԵՌՆԱՅԻՆ ԴԱՐԱՔԱՐԻ ՄԷՋ ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԷՔՆԵՐՈՒ ՈՉՆԱԶՅԱՄՆՆ ՈՒՂՂՈՒՄԸ ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ՀԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Եւրոպական խորհրդարանը ընդունած է «Մշակոյթի համար նոր եւրոպական օրակարգի եւ միջազգային մշակութային յարաբերութիւններու համար ԵՄ նոր ռազմավարութեան իրականացում» բանաձեւը:



Ինչպէս կը տեղեկացնէ ՀՀ Կրթութեան, գիտութեան, մշակոյթի եւ մարմնակրթութեան նախարարութեան տարածած հարցրոգագրութիւնը, բանաձեւին մէջ անդրադարձ կը կատարուի հակամարտային գօտիներուն մէջ մշակութային արժէքներու պաշտպանութեան հարցերուն եւ կը դատապարտուի վերջին հակամարտութիւններու ժամանակ պատմական, գեղարուեստական եւ մշակութային ժառանգութեան նպատակաւորուած ոչնչացումը:

Եւրոպական խորհրդարանի անվտանգային ու պաշտպանական հարցերով ենթակոմիտէի նախագահ Նաթալի Լուազոյի ստորագրած եւ Նոյն խմբակցութեան անդամ Փեթրաս Աուսթրէլիչուսի կողմէ համաստորագրուած լրամշակման հիման վրայ յստակ կը քննադատուի նաեւ Լեռնային Ղարաբաղի մէջ հայկական մշակութային արժէքներու ոչնչացման ուղղուած Ատրպէյճանի շարունակական քաղաքականութիւնը:

Բանաձեւի 78-րդ կէտին մէջ, մասնաւորապէս, կը նշուի. «Եւրոխորհրդարանը կոչ կ'ընէ յանձնաժողովին խստի դատապարտելու վերջին հակամարտութիւններու ընթացքին պատմական, գեղարուեստական եւ մշակութային ժառանգութեան ոչնչացումը, ինչպէս նաեւ պատմական, գեղարուեստական եւ մշակութային ժառանգութեան համակարգուած եւ քաղաքական կամ գաղափարական շարժառիթներով նպատակաւորուած ոչնչացումը: Եւրոխորհրդարանը կոչ կ'ընէ յանձնաժողովին խստի դատապարտելու նաեւ ինքնիշխան պետութիւններու, ժողովուրդներու կամ փոքրամասնութիւններու ինքնութեան եւ մշակոյթի արմատապէս վերացումը, ներառեալ՝ Լեռնային Ղարաբաղի մէջ եւ անոր շրջակայքին հայկական մշակութային ժառանգութիւնը ոչնչացնելու եւ ժխտելու Ատրպէյճանի շարունակական քաղաքականութիւնը»:

«ԿԸ ՄԻԱՆԱՆՔ ԱՐՑԱԽՑԻ ՄԱՅՐԵՐՈՒ ԿՈՉԻՆ».

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՋ ԱՐՊՈՂ ՄՍՅՐԵՐԸ ԱՐՅԱՆԻ ԿՐԱՆՔԱԿԱՆ ՅՈՐԴԱՐԻՆ ԵՄ ԴԵՄՊԱՆԻ ՓՈՒՍՆՅՈՒՆ ԵՄ ԴԵՄՊԱՆԻ

Արցախի շրջափակման դէմ ուղղուած գործողութիւններ ձեռնարկելու, Արցախի 120.000 բնակիչի, որոնց շարքին են 30.000 երեխաներ, կեանքի, առողջութեան, կրթութեան հիմնարար իրաւունքները վերականգնելու կոչով Յայաստանի տարբեր հատուածներու մէջ ապրող խումբ մը հայ մայրեր Փետրուար 1-ին միասնականութեան շարժում իրականացուցին Յայաստանի մէջ Եւրոմիութեան պատուիրակութեան գրասենեակին դիմաց:



Անոնք ԵՄ դեսպանատան փոխանցեցին այն բաց նամակ, որով օրեր առաջ Արցախի մայրերը դիմած էին Եւրոյանձնաժողովի նախագահ Ուրսուլա Ֆոն տեր Լայեյնին, որպէսզի վերջինս իր ազդեցութիւնը գործի դնէ՝ Ատրպէյճանի բռնապետական վարչակարգին կողմէ Արցախի մէջ ստեղծուած մարդասիրական ճգնաժամը վերացնելու համար:

Նախաձեռնութեան հեղինակներէն Արաքսիա Գրիգորեանը, դիմելով Յայաստանի մէջ ԵՄ պատուիրակութեան ղեկավար, ԵՄ դեսպան Անտրեա Վիքթորինին, յորդորեց անոր Արցախի ծայրը լսելի դարձնել եւ նամակը փոխանցել Ուրսուլա Ֆոն տեր Լայեյնին, թոյլ չտալ, որ Ատրպէյճանը գերի պահէ 30 հազար երեխայ:

«Մենք այստեղ ենք, որպէսզի միանանք Արցախի մայրերու կողին եւ այդ բաց նամակը յանձնենք Յայաստանի մէջ ԵՄ պատուիրակութեան ղեկավար, ԵՄ դեսպան Անտրեա Վիքթորինին, որպէսզի անոնք քայլերու ձեռնարկեն Արցախը ապաշրջափակելու, Ատրպէյճանի յանցաւոր անարդարական գործողութիւնները դադարեցնելու համար», շեշտեց Արաքսիա Գրիգորեան ու ընդգծեց՝ դժուար է ըսել, որ միջազգային հանրութիւնը բաւարար քայլերու կը ձեռնարկէ Արցախի ապաշրջափակման ուղղութեամբ, քանի որ Արցախը Յայաստանին եւ աշխարհին կապող միակ ճանապարհը 50 օրէ աւելի փակ է:

Ըստ անոր՝ իւրաքանչիւր հայ պէտք է ինչ-որ բան ընէ, որպէսզի Արցախն ու մեր 120 հազար հայրենակիցները, որոնք մատնուած են սովի ու ցրտի, կարենան դուրս գալ ստեղծուած իրավիճակէն:

Շարժումին մասնակիցները կը կրէին թեւնոցներ, որոնք պատրաստած էին արցախցիները: Արաքսիա Գրիգորեան ըսաւ, որ ժապատէները կը խորհրդանշեն միասնութիւնը: Սպիտակը անպարտելի ոգիի մաքրութիւնն է, կարմիրը՝ յարգանակի կամքը, մանուշակագոյն թելը՝ մեր յիշողութիւնը կը խորհրդանշէ:

Ան նշեց, որ նամակը յանձնելէ յետոյ պիտի մտածեն յառաջիկայ քայլերուն մասին, եւ իրենց իւրաքանչիւր քայլ միտուած պիտի ըլլալ խնդրի լուծման:

ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻՆ ՈՐԵԿՍՈՒԹԵԱՐ ԱՐՑԱԽԵՆ ԶԱՅԱՍՏԱՆ ՏԵՂԱՓՈԽՈՒՄԸ Ե ԵՄ ԵՐԵՔ ԶԻԱՆԴ

Արցախը Յայաստանին կապող միակ ճանապարհը Ատրպէյճանի կողմէ արգելափակելու պատճառով Արցախի Յանրապետութեան Առողջապահութեան նախարար-



րութեան Յանրապետական բժշկական կեդրոնէն երեք հիւանդներ, որոնցմէ երկուքը ուռուցքային հիւանդութիւններով եւ մէկը՝ վիրահատութիւն պահանջող ախտաբանութեամբ, 31 Յունուարին Կարմիր խաչի միջազգային կոմիտէին միջնորդութեամբ եւ ուղեկցութեամբ տեղափոխուած են ՀՀ մասնագիտացուած բժշկական կեդրոններ:

Ըստ Արցախի Առողջապահութեան նախարարութեան տարածած հարցրոգագրութեան, նախարարութեան ենթակայութեան տակ գործող բժշկական հաստատութիւններուն մէջ կը շարունակուին դադարեցուած մնալ ծրագրուած վիրահատութիւնները:

«Արեւիկ» բժշկական միաւորումին մէջ 7 երեխայ կը գտնուի նորածնային եւ վերակենդանացման բաժանմունքներուն մէջ:

ԲՐԻՏԱՆԻՈՅ ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՐՅԵՐՈՎ ԴԵՍԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԸ ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ԴԵՄՊԱՆԻՆ ՇԵՏ ՀԱՆԴԻՊԱՆ ԸՆԹԱՅԻՆ ՇԵՏՏԱՑ Է ԼԱՉԻՆԻ ՄԻԶԱՆՅՔԸ ՎԵՐԱԲԱՆԱԼՈՒ ՀՐԱՏԱՊ ԱՆՀՐԱՄԺԵՏՈՒԹԻՒՆԸ

Հարկաւոր է ճշում գործադրել հայ ռազմագերիներու սպանութիւններու անկախ հետաքննութեան եւ Լաչինի միջանցքի վերաբացման ուղղութեամբ: Բրիտանիոյ Յամայնքներու պալատին մէջ հարցուպատասխանի ժամանակ նման խնդիր բարձրացուց պատգամաւոր Ռուփա Յաքը:



Նախքան պատգամաւորին ելոյթը Բրիտանիոյ ձեռնարկած գործողութիւններուն մասին խօսեցաւ Միացեալ Թագաւորութեան Եւրոպայի հարցերով պետական նախարար Լեօ Տոքերթին:

«Մենք կը ձգտինք բանակցութիւններուն վերադառնալու եւ Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան խաղաղ կարգաւորման: Ես խօսած եմ Յայաստանի արտաքին գործերու նախարար Միրզոյեանի հետ 18 Յունուարին՝ կապուած մարդասիրական իրավիճակին հետ: Զանդիպած եմ Ատրպէյճանի դեսպանին հետ եւ շեշտած Լաչինի միջանցքը վերաբանալու իրատապ անհրաժեշտութիւնը», ըսաւ Լեօ Տոքերթին:

Ան նաեւ յայտնեց, որ Start Fund հիմնադրամը, որու կարելու նուիրատուներէն մէկը Միացեալ Թագաւորութիւնն է, 350 հազար սթերլինկ հաւաքագրած է ստեղծուած իրավիճակէն տուժածներուն աջակցութիւն տրամադրելու համար:

Բրիտանիոյ խորհրդարանի պատգամաւոր Ռուփա Յաքը նշեց, որ բաւարար գործողութիւններ չեն ձեռնարկուիր Ատրպէյճանը պատասխանատուութեան ենթարկելու ուղղութեամբ:

«Կյս շրջափակումը կը շարունակուի 50 օրէ: Անոր հետեւանքով երեխաները թերսնման վտանգի առջեւ կանգնած են, քանի որ անոնք չի հասնիր բաւարար քանակութեամբ սնունդ եւ դեղորայք: Մենք նաեւ տեսած ենք, որ իրաւապաշտպան կազմակերպութիւնները Լեռնային Ղարաբաղի մէջ արձանագրած են արտադատական սպանութիւններ, պահուող անձերու նկատմամբ ոտնձգութիւններ», ըսաւ Ռուփա Յաքը:

Պատգամաւորը նաեւ վրդովմունքով յիշեցուց, որ Միացեալ Թագաւորութեան Եւրոպայի հարցերով պետական նախարարը վերջերս ակնկալիք յայտնած էր, որ Ատրպէյճանի դատախազութեան հետաքննութիւնը նշանակալի արդիւնքներ տայ:

«Ինչո՞ւ մենք չենք կրնար ճշում գործադրել, որպէսզի այդ սարսփելի ողբերգութիւնը միջազգային անկախ լուծումներ ստանայ», եզրափակեց խօսքը պատգամաւորը:

Ի պատասխան՝ Լեօ Տոքերթին դարձեալ կրկնեց, որ Բրիտանիան կը փափաքի վերադարձ բանակցութիւններու եւ հակամարտութեան խաղաղ կարգաւորում, ինչ որ ան պիտի շեշտէ յառաջիկայ ամիսներուն տարածաշրջան նախատեսուած այցի ժամանակ:

ՊԵՒՃԻՔԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՅԻՆՁՆԱԾՈՂՈՎԻՆ ՄԷՋ ԼԱՉԻՆԻ ՄԻԶԱՆՅՔԻՆ ՇՐՋԱՓՎԱԿՈՒՄԸ ԴԱՏԱԳԱՐՏՈՂ ԲԸՆԱԶԵՐ ԸՆԴՈՒՆՄԸ ԵՆ

ՊԵՒՃԻՔԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ յարաբերութիւններու յանձնաժողովը բանաձեւ ընդունած է՝ Ատրպէյճանի յորդորելով անմիջապէս բանալ Լաչինի միջանցքը:



«ՊԵՒՃԻՔԱՅԻ ԴԱՉՆԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ յարաբերութիւններու յանձնաժողովը միաձայն ընդունած է բանաձեւ, որ կը դատապարտէ Ատրպէյճանը Լեռնային Ղարաբաղի (Արցախի) շրջափակման համար եւ Ատրպէյճանի իշխանութիւններուն կողմէ անմիջապէս բանալու Լաչինի միջանցքը», նշուած է գրառման մէջ:

ԱՐԱՐԱՏ Տնտեսական

ԼԻՔԱՆԱՆ ՏՈՒՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՓՈՆԱՐԺԵՐԸ ԱԻՆՑԱՄ

Լիբանանի Կեդրոնական դրամատան կառավարիչ Ռիատ Սալամե յայտարարեց, թե ԱՄՆ տոլարի պաշտօնական փոխարժեքը լիբանանեան ոսկիի նկատմամբ այսուհետև պիտի ըլլայ 15 հազար լիբանանեան ոսկի մէկ տոլարի համար: Այս որոշումը պիտի ունենայ իր հետեւեանքները մանաւանդ աւելցուած հարկի պարագային: Այսինքն եթէ ապրանքին գինը 10 ամերիկեան տոլար է, 11 առ հարիւր աւելցուած հարկը պիտի ըլլայ 1,1 տոլար կամ 1,1 x 15 հազար = 16.500: Նախկին աւելցուած հարկը 1,1 x 1500 կամ 1650 լիբանանեան լիրա էր: Ներկայիս յաճախորդը պիտի վճարէ 16.500 լիբանանեան ոսկի ապրանքի գինին վրայ: Սղաճը պիտի ըլլայ հետեւանքը այս որոշումին: Պահանջարկի նուազում ալ տեղի կրնայ ունենալ, որովհետեւ Լիբանանի մէջ տակաւին կան շատ մարդիկ, որոնք իրենց աշխատավարձը կը գանձեն լիբանանեան լիրայով:



Ատրպէյճանի կողմէ Արցախի բնակչութեան շրջափակման անցաւ 51 օրը: Շրջափակումին պատճառով 5103 հոգի կորսնցուցած են իրենց գործը: Եթէ չըլլար շրջափակումը 20 հազար թոն ապրանք պիտի հասներ Արցախ: Անոր միայն չէն համեմատութիւնը հասած է միայն, ռուս խառնուրդապահներու եւ Կարմիր Խաչի միջազգային կոմիտէի միջնորդութեամբ: Սուրիոյ, վառելանիւթի եւ դեղորայքի մատակարարումը շատոնց դժուար է: Մանկական սննդամթերքի եւ կարգ մը մանկական դեղերու պահեստը սկսած է նուազիլ: Կարմիր խաչի կազմակերպութեան միջամտութեամբ կարգ մը հիւանդներ տեղափոխուած են Երեւան, բուժումի համար:

ՀԱՅԱՍՏԱՆ ԱՐՑԱՒԻ ՇՐՋԱՓԱԿՈՒՄԸ

Ատրպէյճանի կողմէ Արցախի բնակչութեան շրջափակման անցաւ 51 օրը: Շրջափակումին պատճառով 5103 հոգի կորսնցուցած են իրենց գործը: Եթէ չըլլար շրջափակումը 20 հազար թոն ապրանք պիտի հասներ Արցախ: Անոր միայն չէն համեմատութիւնը հասած է միայն, ռուս խառնուրդապահներու եւ Կարմիր Խաչի միջազգային կոմիտէի միջնորդութեամբ: Սուրիոյ, վառելանիւթի եւ դեղորայքի մատակարարումը շատոնց դժուար է: Մանկական սննդամթերքի եւ կարգ մը մանկական դեղերու պահեստը սկսած է նուազիլ: Կարմիր խաչի կազմակերպութեան միջամտութեամբ կարգ մը հիւանդներ տեղափոխուած են Երեւան, բուժումի համար:

Արցախի կառավարութիւնը մնացած ուսելիքը եւ վառելանիւթը հաւասար չափով բաշխելու համար հաստատած է կտրոսային համակարգ: Իւրաքանչիւր քաղաքացիի տուած են կտրոս վառելանիւթի եւ ուսելիքի համար: Յարդ միջազգային քայլեր չեն երեւիր: Ատրպէյճան կ'աշխատի անկախօժիտութեան մթնոլորտի մը մէջ: Շրջանքի մարզանքն աւելի չեն կատարեր ազդեցիկ երկիրներ: Գետնի վրայ քայլ առնելու ժամանակը շատոնց հասած է Արցախի շրջափակումը դարձնելու համար: Հակառակ պարագային ականատես պիտի դառնանք մարդկային աղէտի մը:

ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼ ԵՒ ԱՓՐԻԿԷ ՆԵՐՂՈՒՄ ԵՒ ԱՌԻՅԵՐ

Իրանեան «Ֆարս» լրատու գործակալութիւնը յայտարարեց, թէ Ռուսիա դարձաւ Իրանի մէջ ամենամեծ ներդրում կատարող երկիրը: Ռուսիա 2,7 միլիարդ տոլարի ներդրում կատարած է արեւմտեան Իրանի Իլամ նահանգի երկու ծրագիրներու մէջ: Այս ներդրումը կը կազմէ օտար ներդրումի 45 առ հարիւրը: Արաբական Միացեալ Էմիրութիւններ, Աֆղանիստան, Թուրքիա եւ Չինաստան Իրանի մէջ ամենաշատ ներդրում կատարած երկիրներն են: Չինաստանի ներդրումը հասած է 185 միլիոն տոլարի, որ կը համարուի անբաւարար, նկատի առնելով երկու երկիրներուն միջեւ ռազմավարական յարաբերութիւնը: Իրան 10,2 միլիարդ տոլարի ներդրում կը սպասէր 2022-ին, սակայն կրցաւ հասնիլ 5,95 միլիարդ տոլարի:

Թուրքիա տնտեսական պատճառներով կ'ուզէ յարաբերութիւնը զարգացնել Սուրիոյ հետ: Նպատակը իր արտարածքի ապրանքի արաբական շուկայ հասցնելն է ամենաաւան միջոցով եւ այդ միջոցը Սուրիոյ միջոցով է: Սուրիա իր կարգին կ'ուզէ պարտադրել իր պայմանները այդ սահմանը բանալէ առաջ: Այսինքն, երկու երկիրներուն միջեւ յարաբերութեան բարելաւում, մանաւանդ Թուրքիոյ կատարած ժխտական եւ վտանգաւոր դերն ենք Սուրիոյ մէջ տեղի ունեցած պատերազմի ատեն, Արեւմուտքի ծրագիրը գործադրելով: Սուրիա կ'ուզէ նաեւ թրջական ուժերու քաշուիլը երկրին: Թուրքիա ճնշումի կ'ենթարկուի ԱՄՆ-ի կողմէ՝ որեւէ զիջում չկատարելու Սուրիոյ վարչակարգին, որ չէ ընդունուած ԱՄՆ-ի կողմէ:

ԵՐՈՊԱ ԻՏԱԼԻԱ ԵՒ ՆՈՐԿԵԿԻԱ

Իտալիոյ վարչապետ ճորճիա Մելոնիի դիմագրաւած առաջին հարցերէն մէկը ափրիկեցի ապօրինի գաղթականներու մուտքն էր երկիր՝ գալով միջերկրական ծովու հիւսիսային ափերէն: Անոնց առաջին կայանը կը հանդիսանայ Իտալիան: Վարչապետը քակիցս յայտարարած էր, թէ Ափրիկէի հարցերուն լուծումը կը կայանայ անոր ազատագրումին մէջ իր նախկին գաղութարարներէն ու անոնց քաղաքականութենէն, ակնարկելով իր դրացի Ֆրանսային: Ան նոյնիսկ առաջարկած էր ծովային պաշարումի ենթարկել Երոպայի հարաւային ամբողջ ծովագերքը, ապօրինի գաղթականներու մուտքը արգիլելու համար: Այս հարցին մէջ ցարդ ան որեւէ յաջողութիւն չարձանագրեց:

Նորվեկիոյ պետական սնտուկը, որ կ'ընդգրկէ երկրին հիմնական հարստութիւնը՝ ստացուած քարիւղի ու բնական կազի եկամուտէն, 2022-ին կրցեց 164,4 միլիարդ տոլարի վնաս: Այս սնտուկին մէջ ի պահ դրուած գումարէն մաս մը բաժնետոմսերու շուկային մէջ ներդրուած էր: Այս շուկան անցեալ տարի մեծ ցնցումներու ենթարկուեցաւ եւ բաժնետոմսերու արժեքը նուազեցաւ: Սնտուկը ունի 9300 ընկերութիւններու բաժնետոմսեր եւ տէրն է շուկայի բաժնետոմսերու 1.3 առ հարիւրին, 1200 միլիարդ տոլար արժեքով: Հակառակ արձանագրուած վնասին, սնտուկին մէջ ի պահ դրուած գումարը աւելցաւ քարիւղի եւ բնական կազի գինի յաւելումին պատճառով:


ԱՄՆ ՊԱՐՏԵԻ ԶԱՓԻՆ ԿՏԱՆԳԸ

ԱՄՆ-ի Գանձային նախարար Ժանեթ Ելըն յայտարարեց, թէ գոնկրեւի կողմէ պարտքի սահմանը չբարձրացնելու պարագային երկիրը պիտի յայտարարէ պարտքի տոկոսները չվճարել ժամանակին, ուրեմն՝ սնանկացում: Ան այս զգուշացումը ուղղեց գոնկրեւի անդամներուն: Նաեւ, այս սահմանին չբարձրացնելը պիտի պատճառէ տնտեսական մեծ տագնապ եւ անկում, ըստ Ելընի: Ան նաեւ կոչ ուղղեց հաւասարակշռելու երկրին ամսական կամ պիտոնէն: Այսինքն ծախսելու հաւաքուած տուրքին չափ: Ելըն կոչ ուղղեց նաեւ սահմանափակելու երկրի պիտոնէին բացը: Նախարարը զգուշացուց սնանկացում յայտարարելու հետեւանքներէն: Տոլարով պարտքի տոկոսի բարձրացում, միջազգային տնտեսական տագնապ պիտի ըլլան հետեւանքները այդ յայտարարութեան: Գոնկրեւը ունի միւսեւ Յունիսի վերջը բարձրացնելու համար պարտքին սահմանը:

Գոնկրեւի Ներկայացուցիչներու պալատին մէջ Հանրապետական մեծամասնութիւնը կ'ուզէ սահմանափակել կառավարութեան ծախսը, պիտոնէի բացը նուազեցնելով: Այս գինը ան կ'ուզէ ընդունելու համար պարտքի չափին յաւելումը: Պարտքին սահմանը ներկայիս 31,4 հազար միլիարդ տոլար է:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏՐԱԿ ԱՇԽԱՐՀԱՔԱՆՈՒԹԵԱՆ ՓՈՆՈՒՂ ԺԱՄԱՆԱԿ

ԱՄՆ-ի կիրարկած տնտեսական պատճամիջոցները՝ իր ուզած քաղաքականութիւնը չվարող կամ իրեն մտիկ չընող պետութիւններու վրայ, սկսած է ունենալ հակառակ ազդեցութիւն: Այսինքն այդ պատճամիջոցներու ենթարկուած երկիրները երկու ձեւով կը հեռանան օգտագործելէ ամերիկեան տոլարը: Առաջին, գայն այլեւս որպէս պա-



հեստի դրամանիշ չեն օգտագործեր եւ տոլարը կը փոխարինեն չինական եուանով, ոսկիով կամ այլ դրամանիշերով: Երկրորդ, կարգ մը երկիրներ իրարու հետ առեւտուր սկսած են կատարել իրենց դրամանիշերով, առանց տոլար օգտագործելու: Այս երկու ուղղութիւնները երկար ժամանակի վրայ ժխտական ազդեցութիւն պիտի ունենան ԱՄՆ տոլարին վրայ անոր փոխարինողը նուազեցնելով: 1971 թուականէն սկսեալ ԱՄՆ տոլարը կը տպէր առանց ոսկիի պահեստի, միայն վստահելով այն իրողութեան, թէ ԱՄՆ տոլարը պահեստի եւ առեւտուրի դրամանիշ է: Այս պարագան սկսած է փոխուիլ: ՊՐԻՔՍ-ի հինգ երկիրներու եւ Մեուտական Արաբիոյ որոշումները՝ այսուհետեւ միայն ԱՄՆ տոլար չօգտագործելու հում նիւթի առեւտուրին մէջ, բաւական ժխտական քայլ է տոլարին համար: ԱՄՆ-ի վարած տնտեսական պատճամիջոցներու քաղաքականութեան ժամանակը սկսած է մօտենալ իր աւարտին, ըստ միջազգային տնտեսագետներու:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔ ՇԱՐԻ ՏՈՎՈՒ (Profit margin)

Շահի տոկոսը այն գումարն է, որ առեւտրականներ կը շահին իրենց ծախած ապրանքին վրայ: Ան կը տարուի 10 առ հարիւրի եւ աւելի բարձր համեմատութեան մը միջեւ: Այսինքն եթէ ապրանքը գնած է 100 ոսկիի, շահը պիտի ըլլայ 100 x 10/100 = 10 ոսկի, 10 առ հարիւր շահէն 110 ոսկիի: Խղճամիտ վաճառականներ, բնական օրերուն կը շահին 10-20 առ հարիւրի միջեւ: Այս է ընդունուած համեմատութիւնը: Սակայն, կարգ մը վաճառականներ, պատրաստ կամ անորոշութեան պարագային, կամ մրցակից չունենալու պարագային, ապրանքը կը վաճառեն 20-100 կամ աւելի բարձր համեմատութեամբ:

Կառավարութիւններ ունին քննիչներ, որոնք կը հսկեն գիններուն, առեւտրական կեդրոններ եւ խանութներ այցելելով ու քննելով ապրանքներու գիները: Սակայն, շատ մը երկիրներու մէջ, ինչպէս Լիբանան, այդ քննիչները աշխույժ չեն կամ վաճառականը տուգանելու պարագային անոնց որոշումը կ'առաջարկուի միջամտութեամբ: Այսինքն, այս համակարգը չ'աշխատող պետք եղածին նման եւ մենք կ'ունենանք բարձր սղաճ, գիներու բարձրացում: Լիբանանի քաղաքացիական պատերազմին այս էր վիճակը: Հիմա ալ կը նկատենք նոյն պարագան: Երբ չեն աշխատող կառավարական քննիչները, վաճառականներ, անշուշտ բացառութիւններով, կրնան շահիլ աւելի բարձր համեմատութեամբ, քաղաքացի արդատացնելով:

Վ. ԹՈՒՆՈՒՆԵԱՆ

ՎԵՐԱԳՐԵՄ ՈՐ ԶԵՄԱՌՈՒԻ ՀԱՄԱԿԱՐԳ ՄԸ, ՈՐ ՀՆԱՐԱՌՈՒԹԻՒՆ ԿՈՒ ՏԱՀ ՏԱՐԵԿԱՆ 100 ՀԱՉԱՐ ՍՓԻՈՔԱԶԱՅԵՐՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՏԱՐԵՐ ՇՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՄԷ՞՞

ՎԱՐԴԱՆ ՄԱՐԱՇԼԵԱՆ

2012 թուականէն ի վեր «Վերադարձ Հայաստան»-ը (Repat Armenia) կ'աշակցի անհատներու եւ ընտանիքներու հայրենադարձութեան գործընթացին, բարենպաստ միջավայրի ձեւաւորում՝ նպաստելով հայրենիքի մէջ աւտոնոմ համարկման:



Կազմակերպութեան համահիմնադիր եւ գործադիր տնօրէն Վարդան Մարաշլեան 2010-ին Ռուսիայէն տեղափոխուած է Հայաստան: 2,5 տարի եղած է Հայաստանի սփիւռքի փոխնախարար: Մարաշլեան ու իր գաղափարակիցները, գիտակցելով հայրենադարձութեան խնդրի կարեւորութիւնը, որոշած են ստեղծել հիմնադրամ, որ կը խթանէ հայրենադարձութիւնը, կը ձեւաւորէ հայրենադարձներու աջակցութեան համակարգ եւ ապագային նաեւ պետութեան կ'օգնէ հայրենադարձութեան համար բարենպաստ միջավայր ստեղծելու գործին մէջ:

«Տասներկու հոգիով սկսանք աշխատանքը: Մեր մէկ մասը կը մտածէր տեղեկատուական կայք, համակարգ ստեղծելու մասին, որ կ'աշակցի հայրենադարձներուն, իսկ միւս մասը կարելորեց յստակ կազմակերպութեան հիմնադրումը, որ կ'ունենայ աշխատակիցներ. անոնք կ'օգնեն այն մարդոց, որոնք կը փափաքին տեղափոխուիլ Հայաստան: Մեր ուժերը միաւորուեցան եւ ստեղծուեցաւ «Վերադարձ Հայաստան»-ը: Այդ շրջանը համընկաւ նաեւ Սուրիայէն մեր հայրենակիցներուն՝ Հայաստան հոսքի հետ, սակայն կառոյցը ստեղծած ենք կամաւոր եւ գիտակցաբար հայրենադարձութեան աջակցելու համար», կը պատմէ Մարաշլեան:



Հիմնադրամին աշխատակիցները յստակ կը գիտակցին, որ հայրենադարձութիւնը բարդ գործընթաց է: Ռեւէ մէկը նման որոշում մէկ անգամէն չի կայացներ: Մարդիկ նախ կը փափաքին աւելի լաւ ճանչնալ Հայաստանը: Այդ կ'ընեն կամաւորական, կրթական, կարճաժամկետ դասընթացներու եւ այլ ծրագիրներու միջոցով:

Հիմնադրամը փորձարարական մօտեցում ձեւաւորած է ստեղծած է հայրենադարձներու ցանց: Այդ ֆէյսպուքի փակ խումբ է, որուն մէջ 12 հազարէն աւելի մարդ կայ: Անոնք կը փորձեն օգտակար դառնալ միմեանց տարբեր հարցերու մէջ: Խումբին մէջ ընդգրկուած հայրենադարձները կամ մարդիկ, որոնք մտադիր են վերադառնալ Հայաստան, միմեանց կու տան հարցումներ ու կը ստանան գործնական պատասխաններ:



«Վերադարձ Հայաստան»-ը կը կեդրոնանայ հայրենադարձներու համար աշխատանք գտնելու, սեփական առեւտուրը սկսելու գործին մէջ աջակցութիւն ցոյց տալու վրայ: Կ'ընէ հնարաւորը, որ Հայաստանի շուկային մէջ ճանչնան գանտը:

«Վերադարձ Հայաստան»-ին տարեկան 1000 մարդ կը դիմէ: Անոնց զգալի մասը 25-40 տարեկան մարդիկ են, որոնք ունին լաւ կրթութիւն, հետաքրքրական գաղափարներ, պատրաստ են փոփոխութիւններու: Հիմնականին

www.araraddaily.com

ԱՐԱՐԱԴ ՕՂԱՎԻԿԱԿԱՆ ԿԻՍՍԱՐՏԱԿԱՆ ԴԱՐՁ

ԱՆՂԻՈՅ ԼԻԿԱՅԻ ԲԱԺԱԿԻ ԿԻՍՍԱՐՏԱԿԱՆ ԴԱՐՁ ՆԻՔԵՏԱԸ ԵՈՒՆԱՅԹԸՑ ԶԱՍԱԻ ԱՄԱՐՏԱԿԱՆ

Անգլիոյ ֆուտբոլի լիգայի բաժակի կիսաարտական հանգրուանի դարձի առաջին մրցումին, երրորդ դիրքը գրաւող «Նիքեթսը Եոնայթթը» իր դաշտին վրայ մրցեցաւ 20-րդ դիրքը գրաւող «Սաութհեմփթըն»-ի դէմ: Երթի մրցումին, «Նիքեթսը Եոնայթթը» յաղթանակ տարած էր: Երթի մրցումին ալ ան յաշթանակ տարաւ եւ երկու մրցումներու հաշիւով հասաւ արտական հանգրուան: Մրցումի 5-րդ վայրկեանին, կիսապաշտպան Լոնկսթաֆ յառաջ տարաւ «Նիքեթսը»-ը, պաշտպան Թրիփիէի փոխանցումով: 21-րդ վայրկեանին, Լոնկսթաֆ հաշիւը դարձուց 2-0, փարակուէյցի կիսապաշտպան Ալմիրոնի փոխանցումէն օգտուելով: Մրցումի 29-րդ վայրկեանին, սկոտլիացի յարձակող Ատամզ հաշիւը դարձուց 2-1: Մրցումի 82-րդ վայրկեանին, «Նիքեթսը»-ի պրագիցի կիսապաշտպան Պրուսո Կիմարայէշ կարմիր քարտ ստացաւ: Մրցումը ավարտեցաւ «Նիքեթսը Եոնայթթը»-ի յաղթանակով: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքը.

- Նիքեթսը Եոն. (Ա.) - Սաութհեմփթըն (Ա.) 2-1, երթ. 1-0

ԱՆՂԻՈՅ ԲԱԺԱԿԻ 1/16-ՐԴ ԱՄԱՐՏԱԿԱՆ ՊԼԵՔՊԸՐՆ ՌՈՎԸՐԶ ՅԱՂԹԱԿԱՆ

Անգլիոյ ֆուտբոլի բաժակի վերջին 32 խումբերու կամ 4-րդ հանգրուանի կրկնուած մրցումի մը ընթացքին, Բ. դասակարգի 19-րդ դիրքը գրաւող «Պիրմինկեմ Սիթի»-ի եւ Բ. դասակարգի 5-րդ դիրքը գրաւող «Պլեքպըրն Ռո-




վըրզ»-ի միջեւ ավարտեցաւ հիւրերու յաղթանակով յետ երկարածումի եւ «Պլեքպըրն Ռովըրզ» անցաւ վերջին 16 խումբերու հանգրուան: Մրցումին միակ կողմը նշանակեց «Պիրմինկեմ Սիթի»-ի ամերիկացի պաշտպան Թրասթի սխալմամբ իր բերդին մէջ, 100-րդ վայրկեանին: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքը.

- Պիրմինկեմ Սիթի (Բ.) - Պլեքպըրն Ռովըրզ (Բ.) 0-1

ԻՏԱԼԻՈՅ ԲԱԺԱԿԻ 1/4-ՐԴ ԱՄԱՐՏԱԿԱՆ ԻՆԹԵՐ ՄԻԼԱՆ ԴԵՊԻ ԿԻՍՍԱՐՏԱԿԱՆ

Իտալիոյ ֆուտբոլի բաժակի քառորդ ավարտական հանգրուանի առաջին մրցումին, 2-րդ դիրքը գրաւող «Ինթեր Միլան»-ը մրցեցաւ իր դաշտին վրայ 4-րդ դիրքը գրա-



ւող Պերկամոյի «Աթալանթա»-ի դէմ: Զաւասարակշռուած մրցումին, «Ինթեր Միլան» անելի արդիւնաւետ ձեւով գործող կազմն էր, որ կրցաւ իր կատարած 3 դիպուկ ու 6 անկիւնային հարուածներէն նշանակել մէկ կողմ: Իսկ «Աթալանթա» կրցաւ կատարել 1 դիպուկ ու 3 անկիւնային հարուած: Մրցումին միակ կողմը նշանակեց պաշտպան Մարթո Տարմիան, 57-րդ վայրկեանին, արժանաւորի յարձակող Լաուրաբո Մարթինէզի փոխանցումով: Զետրիխ Միլիթարեան մասնակցեցաւ «Ինթեր Միլան»-ի ամբողջ մրցումին: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքը.

- Ինթեր Միլան (Ա.) - Աթալանթա (Ա.) 1-0

ԳԵՐՄԱՆԻՈՅ ԲԱԺԱԿԻ 1/8-ՐԴ ԱՄԱՐՏԱԿԱՆ ԻՆԻՈՆ ԵՒ ՇԹՈՒԹՎԱՐԹ ՅԱՂԹԵՑԻՆ

Գերմանիոյ ֆուտբոլի բաժակի վերջին 16 խումբերու կամ 1/8-րդ ավարտական հանգրուանի առաջին մրցումին, 2-րդ դիրքը գրաւող «Ինիոն Պերլին» իր դաշտին վրայ ընդունեց 7-րդ դիրքը գրաւող «Վոլֆսպուրկ»-ը եւ յաղթանակ տարաւ: Մրցումի 5-րդ վայրկեանին, յարձակող Վալտշմիտթ յառաջ տարաւ «Վոլֆսպուրկ»-ը, կիսապաշտպան Կերիարտթի փոխանցումով: Սակայն, պաշտպան Քլոնց 12-րդ եւ փոխարինող յարձակող Պերենս 79-րդ վայրկեաններուն հաշիւը ռազմուցին 2-1 ի նպաստ «Ինիոն»-ի, խրուարթ պաշտպան Եուրանովիչի եւ սիւրի-նամցի յարձակող Պերքրի փոխանցումներով: Մրցումի

87-րդ վայրկեանին, «Ինիոն»-ի պաշտպան Կիսըլման ստացաւ իր երկրորդ դեղին քարտը: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Փատերպորն (Բ.) - Շթութպարթ (Ա.) 1-2
- Ինիոն Պերլին (Ա.) - Վոլֆսպուրկ (Ա.) 2-1

ՊԵՆԻՆՏԻՆԱ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ 23-ՐԴ ԶԱՆՎՐՈՒՄ ԱՆՎԵՐ ԶԱՒԱՍԱՐԵՑԱՒ

Պենինտինա ֆուտբոլի ախոյեանութեան 23-րդ հանգրուանի մրցումներու ծիրին մէջ, 3-րդ դիրքը գրաւող «Անվեր»-ը իր դաշտէն դուրս մրցեցաւ 11-րդ դիրքը գրաւող «Աստըրլիթ»-ի դէմ ու մրցումը ավարտեցաւ առանց կոլերու հաւասարութեամբ: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Սթանտար Լիթ - ԱՍ Իւլիէն 3-1
- Սիփրթիկ Շարլըրուա - Ինիոն Սէն Կիլուազ 0-1
- Աստըրլիթ - Անվեր 0-0
- Սերքըլ Պրիւ - Կենթ 3-2
- Չուլթէ վարեկէմ - Զլեայ Պրիւ 1-2
- Տէնթ - ՌՖՍ Սերէնկ 4-0

Դասաւորում. 1) Տէնթ 22 մ 58 կետ 56-19, 2) Ինիոն Սէն Կիլուազ 52 կետ 46-24, 3) Անվեր 46 կետ 42-23, 4) Զլեայ Պրիւ 40 կետ 42-29, 5) Կենթ 38 կետ 39-24:

ԱՓՐԻԿԵՒ ԱԶԳԵՐՈՒ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ ԿԻՍՍԱՐՏ. ԱԼԸԵՐԻԱ ԵՒ ՍԵՆԵԿԱԼ ԶԱՍԱԻ ԱՄԱՐՏԱԿԱՆ

Ափրիկեի Ազգերու ֆուտբոլի ախոյեանութեան քառորդ ավարտական մրցումներուն արձանագրուեցան հետեւեալ արդիւնքները.

- Ալճերիա - Փղոսկրեայ Ափուսթ 1-0
- Սենեկալ - Մարիտանիա 1-0
- Մատակասքար - Մոզամպիք 3-1
- Նիժեր - Ղանա 2-0

Իսկ կիսաարտական հանգրուանին արձանագրուեցան հետեւեալ արդիւնքները.

- Ալճերիա - Նիժեր 5-0
- Սենեկալ - Մատակասքար 1-0

ԱՅՍՕՐՈՒԱՆ ՄՐՅՈՒՄՆԵՐՈՒ ՅԱՅՏԱԳԻՐ

ՍՊԱՆԻՈՅ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ 17-ՐԴ ԶԱՆՎՐՈՒՄ
22:00 Ռեալ Մատրիտ (2) - Վալենսիա (14)
ԻՏԱԼԻՈՅ ԲԱԺԱԿԻ 1/4-ՐԴ ԱՄԱՐՏԱԿԱՆ
22:00 Եուվենթինա (13) - Լազիո Ռոմա (3)
ՊԵՆԻՆՏԻՆԱ ԲԱԺԱԿԻ ԿԻՍՍԱՐՏԱԿԱՆ ԵՐԹ
21:45 Չուլթէ վարեկէմ (16) - Մեշըլէն (13)
ԿԻՊՐՈՍԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ 22-ՐԴ ԶԱՆՎՐՈՒՄ
19:00 Անորթոզիա Ֆամակ. (10) - Օմնիա Նիկոսիա (5)
ՊԱՍԵՏԹՊՈՒՆ ԵՆ. ՊԻ. ԷՅ. Ի ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՆ
02:30 Զիլվէնտ Զավալիըզ (5) - Մեմֆիս Կրիզլիզ (2)
05:00 Միլուոքի Պաքս (2) - ԼԱ Զիլիըզ (4)
ՊԱՍԵՏԹՊՈՒՆ ԵՆՈՒՐՈՒԿԻ 23-ՐԴ ԶԱՆՎՐՈՒՄ
21:30 Վալենսիա Պաքսթ (9) - Մաքայի ԹԱ (8)
21:30 Արմանի Միլան (17) - Ցրվենա Չվեզտա (12)
21:30 Պարսելուն (3) - Պայըն Միլնի (13)
ԹԵՆԻՍԻ ՕՍԵՆ 6ԼՄԵ ՏՐՅՑ. 1/8-ՐԴ ԶԱՆՎՐՈՒՄ
01:00-Էն սկսեալ, «eurosport» կայանէն
ԶԵՆԵԼԱՐԸԱՒ
11:15 Սեուտական Արաբիոյ շրջավազը, «eurosport»-էն
13:35 Վուլթթա Ա Վալենսիա շրջավազը, «eurosport»-էն

ՊԱՍԵՏԹՊՈՒՆ ՏՈՒՊԱՅԻ ՄՐՅԱՇԱՐԹԻ 4-ՐԴ ԶԱՆՎՐՈՒՄ ՏԻՆԱՍՕ ՊԵՅՐՈՒԹ ԵՒ ՌԻԱՏԻ ՅԱՂԹԵՑԻՆ

Արաբական Միացեալ Եմիրութեան Տուպայ քաղաքի պաքսթապոլի ակումբներու միջազգային մրցաշարի մրցումները, 10 ակումբներու մասնակցութեամբ, բաժնուած երկու խմբակի, արձանագրուած են հետեւեալ արդիւնքները.



Ա. խմբակ.
- Տինամո Պէյրութ (Լիբ.) - Նասըր (Լիպ.) 101-87
- Ուստա (Սուր.) - Սթրոնկ Կրուփ (Փիլ.) 61-87
- Արաբ. Միաց. Եմիր. (ԱՄԵ) - Նասըր (Լիպ.) 86-92
Դասաւորում. 1) Տինամո Պէյրութ 4 յաղթ - 0 պարտ / կէտերու տարբ. +75, 2) Սթրոնկ Կրուփ 3-1 / +41, 3) Նասըր 2-2 / -11, 4) Արաբ. Միաց. Եմիր. 1-3 / -12, 5) Ուստա 0-4 / -93
Բ. խմբակ. - Պէյրութ Զլապ (Լիբ.) - Սալլա (Մար.) 86-77
- ԱՖրիքի (Թուն.) - Ռիատի (Լիբ.) 62-68
Դասաւորում. 1) ԱՖրիքի 2 յաղթ - 1 պարտ / կէտերու տարբ. +19, 2) Ռիատի 2-0 / +9, 3) Պէյրութ 1-1 / +6, 4) Սալլա 0-3 / -34, 5) Նաֆթ 0-0 / 0

ՖՈՒԹՍԱԼ ԼԻԲԱՆԱՆԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ Բ. ՓՈՒԼԻ Ա. ԶԱՆՎՐ. ՖՈՒԹՍԱԼ ՓՐՕ ԶԱՒԱՍԱՐԵՑԱՒ

Լիբանանի ֆուտբոլի ախոյեանութեան Բ. փուլի մրցումները սկսան առաջին վեց դիրքերը գրաւած եւ 7-րդէն 12-րդ դիրքերը գրաւած խումբերուն միջեւ: Ստորեւ տեսնել առաջին հանգրուանին արձանագրուած արդիւնքները.

Առաջին վեցեակ. - Բ.Մ.Մ.Մ. ՊՅ - Ֆուտսալ Փրո 4-4
- Ն.Ս.Ե. - Ճունի 4-6
- Զորիյա Սայտա - Բանակ 8-3
Դասաւորում. 1) Ֆուտսալ Փրո 34 կետ 70-33, 2) Ճունի 30 կետ 69-33, 3) Զորիյա 27 կետ 76-38, 4) Բանակ 24 կետ 56-33, 5) Ն.Ս.Ե. 19 կետ 51-43, 6) Բ.Մ.Մ.Մ. 18 կետ 43-34
Երկրորդ վեցեակ. - Աստըթ - Ռապիի 4-6
- Շապիպաթ Ալ Նահտա - Ճանուպ 8-7
- Թրիփոլի Ֆայիա - Շուլթաթ 3-6
Դասաւորում. 7) Շուլթաթ 18 կետ 38-39, 8) Աստըթ 14 կետ 40-46, 9) Շապիպաթ Ալ Նահտա 9 կետ 51-78, 10) Ճանուպ 9 կետ 62-53, 11) Ռապիի 3 կետ 47-76, 12) Թրիփոլի Ֆայիա 0 կետ 20-117

ԶԻՎԱՐՇՈՒԹԻՆ ՌՈՒՍԻՈՅ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՅԱՇԱՐԸ ՄԱՐԻԱ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ՝ 2-ՐԴ

Ռուսիոյ Դաշնութեան մէջ տեղի ունեցած ձիավարժութեան միջազգային մրցաշարի, 15 տարեկան հայազգի



Մարիա Ալեքսանեան 20 մարզիկներու մէջ գրաւած է 2-րդ դիրքը ու շահած է արծաթե մետալ: Ան յաղթահարած է 100 սմ արգելքը:

«ՎԵՐԱԶԵՍ ՈՐ ԶԵՒԱՌՈՒԹԻ ԶԱՄԱԿԱՐԳ ՄԸ, ՈՐ ԶԵՒԱՌՈՒԹԻՆ ԿՈՒ ՏԱՅ ՏԱՐԵԿԱՆ 100 ԶԱԶԱՐ ՍՓԻՒՔԱԶԱՅԵՐՈՒ ԶԱՅԱՍՏԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՏԱՐԲԵՐ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՄԷՅ»
(Շարունակուած Գ. էջէն)

մէջ կը հայրենադարձուին Ռուսիայէն, ԱՄՆ-էն, Լիբանանէն, Գանատայէն, Իրանէն, Սուրիայէն, Ֆրանսայից, Աւստրալիայէն:

«Վերազեմ, որ օր մը մասնաւորի ու պետականի համագործակցութեամբ ձեւաւորեց յայտնի համակարգ, որուն շնորհիւ տարեկան 100 հազար հայ գայ Զայաստան, կապուի հայրենիքի հետ ու գայն դիտարկէ, որպէս ինքնութեան կարելոյ մաս: Կ'երազեմ, որ ըլլայ համակարգ, որ 80 հազար հայի կը բերէ հայրենիք՝ արիւստակարժ փորձառութիւն ձեռք բերելու, կը բերէ 20 հազար հայի որոնք կը հաստատուին Զայաստանին: Այս պարագային կ'ունենանք արեւն համակարգ, ուր ճնշումը ճիշդ մակարդակի վրայ պիտի ըլլայ: Երբ կը Նայից Զայաստան-Սփիւռք յարաբերութիւններուն ու կը մտածենք, որ Զայաստանը սիրտն է, պէտք է փաստենք, որ այն ցած ճնշում կ'ապահովէ արեւն համակարգ, ուր ճնշումը ճիշդ ըլլայ համակարգ, որ վերոնշեալ թիւով մարդոց բերէ Զայաստան ու համայնքներ, մենք պիտի աջակցինք, որ Նաեւ Սփիւռքը քիչ ձուլուի, քանի որ այն եւս իր խնդիրները ունի», կ'երազեմ Վարդան Մարաշլեան:

Զայրենադարձներու համարկման նպաստելու համար «Վերադարձ Զայաստան»-ի ջանքերով կը կազմակերպուին տարբեր միջոցառումներ, որոնք հայրենադարձներուն հնարաւորութիւն կու տան ծանօթանալու, հաղորդակցուելու, ինչու չէ՝ ընկերանալու միմեանց հետ, կը նախաձեռնուին ճանաչողական այցեր դեպի երկրի տեսարժան վայրեր, կը կազմակերպուին աշխատանքային միջոցառումներ, որոնք ծիրին մէջ հայրենադարձն ու այս կամ այն կազմակերպութեան ներկայացուցիչը կը հանդիպին, հարցազրոյց կը կազմակերպուի, եւ աշխատանք ստանալու հնարաւորութիւնը կը մեծնայ:

ԳՐԱԴՈՒՄՈՒ ՕՐ
ԶԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԳՈԼԷՃԻ ԶԱՐԻՒՄՏԵԱԿԻ ԳՈՂԱՐԱՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆԸ
Կիրակի, 5 Փետրուար 2023, ժամը 7,
Զայ Աւետ. Ա. Եկեղեցի

ARARAD DAILY NEWSPAPER
MANAGING DIRECTOR: ANI SARAFIAN
Tel.-Fax: 01-565599 | P.O.Box: 175275 Mar Mikhael
Beirut | Lebanon | www.araraddaily.com
email: araradoratert@gmail.com
ارارات جريدة سياسية يومية أرمينية | المحبرة المسؤولة: أني صرافيان
تصدر عن شركة مسييسر للمباعة والنشر (ش.م.م.)